

ԲԱՆԱՏՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՒ ԱՐՄԵՆԻԱՆ

(ՀԱՅՈՒԹՎՆԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄ ՆԱԾԻՐՈՒԹԻՒՆԻՑ)

Սրանից ուղիղ 25 տարիներ առաջ, 1956 թուականին, հրատարակել էինք մեր «Դիտուագութիւններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան վերաբերեալ» յօդուածը («Էջմիածիննամագիր», 1956, № Ապ 8-9 և 11-12), որում հայոց այդ նշանաւոր հայրապետի կեանքին ու գործունեութեանը վերաբերող սակաւաթիւ ազբիւրների օգտագործմամբ ու քննական վերաբերութեան ուղիով առաջ էինք քաշել մի շարք հարցեր: Մեր եղբակացութիւնները յանգում էին հիմնականում երկու կետերի: 1. Ստեփանոս Սալմաստեցին 1551 կամ 1552 թուականներին չի մահցել Լուսպամ, այլ յիշաւակուում է ինչպէս հՅական, այնպէս և 60-ական թուականներին: 2. Լուսպի հայոց մայր տանառում գտնուող և նրա անօնիք կրող «տապանաքար» ու արձանագրութիւնը կեց են:

Մեր այդ յաղուածը առիթ էր տուել, որ Հռոմի կերպարնեան վարժարանի սաներից Գերյա Դիրիքոր վրդ. Գետը ուղիչը նոյն հարցերին նույիրուած՝ հայերէն մի ուսումնասիրութեամբ, ուշ կը ուղի էր Անտեփանոս Ե. Սալմաստեցի, կաթողիկոս Էջմիածնի խորագիրը, հանգես գար նախ Քաղմազէա ամսագրի 1962-1963 թթ. համարներում (յետոյ նաև առանձին գրքում՝ Վենետիկ 1964), իսկ աւելի ուշ՝ անդրագառար նաև իր Հայ Եկեղեցին Լեհաստանում՝ իտալերէն աշխատութեան մէջ (Հռոմ, 1971):

Գէտք է ասել, որ Սալմաստեցու կապակցութեամբ Դրիգոր վրդ. Գետրովիչի կատարած աշխատանքը, անկախ իր ներկայացրած գաղափարական զարտուղարակից, շատ նշանակալից ու կարևոր ներդրում էր Ստեփանոս Սալմաստեցուն Նուիրուած ուսումնասիրութիւն-ների բնագաւառում: Գետրովիչը հրապարակ էր գալիս օտարալեզու այնպիսի ազգիւներով, որոնք ուշադրութիւն էին գրաւում թէ՝ իրենց քանակով եւ թէ՝ մեզ հետաքրքրով հարցերի վերաբերեալ պարունակած նոր նիւթերով ու լուսաբանող նոր սուեալներով: Որպէս մասնագէտ՝ մենք մեծ հաճուքով զիմանընեցինք այդ երեսոյթը, նկատի ունենալով, որ Ստեփանոս Սալմաստեցու ուսումնասիրուածը, որպէս առարկայ, կապուած է հենական-լատինական միջավայրի հետ եւ հետեւարար Գետրովիչի նշած լեներէն եւ լատիներն ու մենագրութիւնները անսահմանօրէն կարեւոր նշանակութիւն ունեն այս գործում: Այդ ժամանակ-ներից՝ մենք հետամուտ ենք եղել ամէն գնով ձեռք բերելու այդ նոր նիւթերը, որոնք ուներ կատարելով մեծ կենտրոններում՝ Մոսկուայում, Լենինգրագում, Հռոմում, Լոս Անջելոսում և այլ քայլերում: Եւ մեզ յաջողուել է բաւական քան ձեռք բերել այդ միջացներուից Գետրովիչի հրատարակութիւնների շնորհիւ է, որ նոր ուղիներ են յայտնուել մեզ՝ մեր հետազօտութիւնների համար:

8. **Minasowicz, J.** — Memorabilia. — *Archivum Romanum Codicium*, 1978, 1, 15–20. — *Memorabilia*. — *Bibliotheca Vaticana*, Cod. Vat. Lat. № 12561, 1–2.

յ. Ե. Մինասովչ-ի «Memorabilia» աշխատանքում կարող է լինել այս պատճենը:

Ստորև պատագործում ենք հետևեալ երկու յապատճեամբ:

PChA = Gregorio Petrowicz. La Chiesa Armena in Polonia. Parte prima 1350-1624. Istituto degli Studi Ecclesiastici, Roma, 1971.

ԱՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ԱԽԱՔԵԼՈՒԹԵԱԿԱՆ ԲՆՈՅԹՔ

Յայտնի է, որ Սահմանոս Սալմաստեցին Արեւելեան Հայտառանի մհիքների յանձնարարակոն համակեներով, որոնք ուղղաւած էին Հռոմի պապին և Արեւմուսքի մի քանի քրիստոնեայ պիտութիւններին, անցնում է Եւրոպա՝ Հայտառանի ազատագրման համար օժանդակութիւն ապահովելու յայտնի Այդ կարծիքին է նաև Պարովիչը¹: Մեր տարակարձաւթիւնը նրա հետ ըստ երեւոյթին կայտնում է իր նպատակների իրագործման համար Սալմաստեցու ձեռք տած միջացների գնահատման մէջ:

Սալմաստեցին դիւանագիտական բանակցութիւնների մէջ էր մասնաւ Հռոմի և Եւրոպական կոթութիկ իշխանութիւնների հետ և հասկանալի է, որ, եթէ նրանցից օգնութիւն էր խնդրում, ինքն էլ պիտի արամագրութիւն ցայց տար ինչ որ քանզ ու չափով փոխարձութիւն անելու կամ խոստանալու, եւ դա՝ մի եկեղեցու դիրքություն պիտի համար չէր կարող լինել ոյլ բան, քան զիջումներ անել կամ խոստանուլ՝ կրօնական հարցերի բնագուառում:

Եւ, ահա, մենք տեսնում ենք, որ դիւանագիտական այդպիսի հաշիւներով է, որ Սալմաստեցին 1548/1549 թուականներին յանկարծ յայտնուում է Հռոմում՝ ցնցոց տպաւորութիւն գործելով այդ միջավայրում:

Յայտնի մտաւորական Պ. Պ. Գ. Արեւինոսը գրում է, որ հայոց կոթողիկան Սահմանոսը «Հռոմ եկաւ 1548 թուականին և հապատակութիւն յայտնեց Պօղոս Պապին ու իր գուանութիւնը տուեց համաձայն այն գուանոնքի, որը սահմանուած էր Փլորհնահեան ժողովում»² Եւդինիոս Դ.-ի ժամանակաց³: Իսկ Վատիկանիան դիւանի մի վաւերագրի համաձայն՝ 1549 թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցած կարդինալական նիստում (Consistorium) խօսուում է այն մասին, թէ վերջերս Հռոմ էր ժամանել մի հայ պատրիարք՝ արամագրութիւն ցայց տալով ՀՀնազանդութիւն յայտնել Նորին Սրբութեանը եւ Հռոմէական Ս. Եկեղեցուն, խնդրելով, որ ժողովրդի կազմից իր անձի որպէս հայոց պատրիարք կատարուած ընտրութիւնը հաստատուի Նորին Սրբութեան կողմից⁴ եւ թէ երեք կարդինալների յանձնարարուում է ուսումնասիրել այս հարցը՝ «Խորհելու համար, թէ ի՞նչ կայ անելու եւ Նորին Սրբութեանը աեցնելու»⁵:

Միամստութիւն էր լինել, սակայն, կարծել, թէ հայոց ազգային եկեղեցու գիտապետ Ստեփանոս Սալմաստեցին մինչեւ հեռաւոր Հռոմ հասնելու յազնութիւնը յանձն էր առել պարզուղէս նրա համար, որ կամաւորապէս Լատինական Եկեղեցուն նուիրարերէր իր գարաւոր անկախ եկեղեցին, և ընդունէր նրա գահակալի հպատակութիւնը Եթէ նա խօսում էր այդպիսի՝ տարապայմանօրէն խոչսր զօհողութեան մասին, այն էլ մի ամբողջ ժողովրդի անունից, դա չէր լինի առանց ակնկալութիւնների եւ առանց երկկողմանի ու հաւասար պայմանների: Եթէ մենք ընդունում ենք, որ Սալմաստեցու այս ուղեւորաւթեան շարժուիթը հայկական հարցն էր, ինչպէս ընդունում է եւ Պետրովիչը, եւ նա պաշտօն ունէր այդ մասին բանակցութիւններ կատարելու Հռոմում, ապա միաժամանակ պիտի ընդունենք, որ նմանօրինակ բանակցութիւնները միակողմանի պայմաններով չէ, որ կարող էին կատարուել Քաղաքական ու դիւանագիտական աշխարհում բանակցութիւնները աննպատակ, հետեւարար՝ ձրի, չեն լինում երբեք: Կողմիրը առաւել կամ նուազ չափով պահանջներ ևն ներկայացնում եւ իւրաքանչիւր կողմ աշխատում է նուազագոյն զիջման փախարէն:

1 ՊՍՍ էջ 11 եւ շաբախ:

2 Steph.-Evod. Assemanus, «Bibliothecae Mediceae Laurentianae et Palatinæ codicum mss. orientalium catalogus», Florentiae, 1742, p. 60.

3 Archivum Secretum Vaticanum, Acta Consistorialia incipientia ab anno 1537, tempore Pontificatus s. m. Pauli Papae III, per totum annum 1550, sub Iulio Papa III, p. 1035, 1042-1043. աեւ O. Raynaldu, «Annales ecclesiastici», Lucae, 1755, ad annum 1549, № 35. Հմամ. ՊՍՍ էջ 17. PChA p. 91.

Ճեռագլուխ առաւելագոյն շահ՝ Պէտք է ա՞յս տեսանկիւնից նայել նաև այս բանակցութիւնների վրայ:

Սահմանոս Սալմաստեցին, իր Հռոմ հասնելու օրուանից, շարուցիչ յայտաբարութիւններ էր արել՝ պապին հնագանդուելու և Հայ Եկեղեցին լատինականին հնթարկելու իմաստով։ Բայց նմանօրինակ գործերը լոկ յայտաբարութիւններով չէ, որ լինում են Այդ յայտաբարութիւնների իրացման ճանապարհի վրայ կային երկու ուրբայն հանգրաւաններ։ Առաջինն այն էր, որ բանակցող կաթողիկոսը ինքն անձամբ համաձայնութեան եզրեր գտնէր Լատինական Եկեղեցու ներկայացուցիչների հետ, իսկ երկրորդն այն էր, որ նո, իր երկիրը վերագանակուով, իր գլխաւորած եկեղեցու հաւանութիւնն ու համաձայնութիւնը ապահովէր Հռոմում իր կատարած բանակցութիւնների արգիւնքների հիման վրայ:

Այս հաշումով՝ Հռոմում Սալմաստեցու կատարած բանակցութիւնները գեղ կրում էին նախնական ու պայմանական, եւ բոլոր դէպքերում՝ անհատական, բնոյթ։ Այդ բանակցութիւնների համար էտկան նշանակութիւն ունեցող կէտերից մէկը պապի հանդէպ նրա անձնական հապատակութեան (ապագայի տռումով)՝ արտայացաւթիւնն էր, որ նա կարող էր կատարել նոյն ևսկ առանց իր եկեղեցու պաշտօնական հաւանաւթեան, եւ նա կատարել էր այդ, որպէսզի բացուէր բանակցութիւնների դուռը։ Այդպիսի նշանակութիւն ունեցող կէտերից մէկն էր նաև գաւանական հարցը եւ հայոց կաթողիկոսը կարող էր դրանում եւս զգալ որեւէ կաշկանդուածութիւն, քանի որ գաւանականի էռթիւնը հիմնականում ամփոփուած էր երկու եկեղեցիներում ընդունուած Նիկիական հանգանակի սահմաններում։ իսկ երկու բնութեան վարդապետութեան հարցում, որին այնքան մեծ նշանակութիւն էին տալիս Հռոմում, Սալմաստեցին կարող էր անայլալորէն յայտարարել, թէ Հայ եկեղեցին արդէն միշտ էլ գաւանում էր Քրիստոսի մէջ և անշփոթ միացմածք երկու բնութիւն։ Սալմաստեցին իր այս յայտարարութիւններով Հայ եկեղեցու համար պարտադիր յանձնառութիւններ չէր ստեղծուած։ բայց դրանք, ի հարկէ, լատինական կողմի համար ունէին առաջնակարգ նշանակութիւն և վատիկանը, բանակցութիւնների այսպիսի սկզբնառութեամբ բաւարարուած, իր կողմից առաջին քայլն էր անում հայկական սկզբնառութեամբ բաւարարուած, իր կողմից առաջին քայլն էր անում հայկական կողմի պահանջներին ընդգառաջելու ուղղակեամբ։ Յուլիսս Գ պապը 1550 թ. տպրի կողմի պահանջներին ընդգառաջելու ուղղակեամբ։ Յուլիսս Գ պապը 1550 թ. տպրի 25 թուազրուած յանձնարարական երկու սամակներ է յանձնում Սալմաստեցուն, նամակներ՝ ուղղուած Գիրմանիոյի կարուս և կայսրին եւ Անտոնոսի Սիդիկմանդ Աւգոստոս թագաւորին։ այդ երկու սամակներում, որսնք նոյն բովանդակութեամբ է Աւգոստոս թագաւորին։ այդ երկու սամակներում, որսնք նոյն բովանդակութեամբ էին, պապը նրանց յանձնարարուած էր լսել հայոց կաթողիկոսի խնդրանքը⁵։ Այսքանը, սակայն, բանակցութիւնների համար առաջին հանգրուաւնն էր կազմում։

Երկրորդ հանգուուանի համար դռները բաց էին թողնուած օալսաւած՝ չ-է
մից. Վերջինս, Հռոմում պապի տաջեւ իր յարգալիք խոնարհումը ըստ պատշաճի
կատարելուց եւ երկու եկեղեցիների դաւանական նոյնութեան կամ ձայնակցութեան
ժաման հաւաստիք տալուց յիշով, մնացածը թողնում էր առկախ. մնացածի մասին

4 Այս ժամանակ տեսնել մեր յօդուածք՝ և ներսէս Շնորհալին եւ Արմատ Հաւատոյ ժողովա-

ծուռն, էջմիածին, 1973, № 12, էջ 6-ը:

Բեն. Հերբեստը, որ շատ մօտիկից է ծանօթ եղել լինաւանի հայերն ու սրբաց զբանական ըմբռնութեներին, 1566 թւականին գրում էր, թէ «նրանց քահանաների հետ ունեցած խօսակցութիւններից չկարող ացանք հասկանալ ուրիշ բան, քան այն, որ հայերը, թէեւ տարբեր ձեռով, մեզ հետ դաւանում են նոյն հաւատը, ու վերջապէս տեսանք նրանց հաւատոյ բեր ծէսով, մեզ հետ դաւանում են նոյն հաւատը, ու վերջապէս տեսանք նրանց հաւատոյ դաւանութիւնը եւ նրանում չպատճեցինք որեւէ բանի, որը լինէր նուազ ուղիղ, հաւատի կողմից հայերը միաբան են մեզ հետ եւ իրենք իսկ ընդունում են այդ» (տես B. Herbest

*Wypisanie drogi», *MLUR*, vol. 5, p. 4-6; *Archivum Secretum Vaticanum, Minutae Brevium Iulii PP. III, Arm. 41, t. 55, f. 33v*.

կարելի կը լինէր խօսել միայն այն ժամանակ, երբ իրական յոյսեր կ'երեւացին հայ կական հարցի համար, Գերմանիայի եւ Լեհաստանի այցելութիւններից յիշուր, եւ, իրօք, Հռոմում Սալմաստեցին ձևուագան է միում Հայ Եկեղեց յու անունով զիջումներ անելու կէտում։ Նրանից պահանջուել էր ջուր խառնել պատրագի բաժակի մէջ՝ բայց նա վաղաժամ էր համարել այդ պահանջը՝ ասելով, թէ այդ հարցը պատկանում է բանակցութիւնների հետագայ հանգրուանին։ «Եւ սրովհեան, — գրում է Արեայնոսը, — նա պատարագի խորհրդի մէջ ջուր չէր խառնում գինու հետ, համաձայնուեց, որ ինչպէս ինքը, այնպէս եւ իրեն ենթակայ 27 եպիսկոպոսները հետագայում զինու հետ ջուր կը խառնեն՝ ըստ սովորութեան Հռոմէական Եկեղեցու»⁶։ Արեայնոսը յիշոյ աւելացնում է. «Բազմաթիւ եւ ծանր եղան մեր միջն զիջութանութիւնները կրօնական հարցերի շուրջ» (plura fuerunt et gravia, quae de religione inter nos disservimus)⁷։ Այս խօսքերի թարգմանութեան հարցում մենք հետեւում ենք Հ. Մ. Զամշեանին, որը ճիշտ է⁸: Պետրովիչը յարմար է համարել մեղմել Արեայնոսի այս խօսքերի իմաստը հետ այդ նպատակով. մերժելով Զամշեանի թարգմանութիւնը, ինքը թարգմանել է այսպէս. «Բազմաթիւ եւ լուրջ եղան մեր խօսակցութիւնները կրօնքի վերաբերեալ հարցերու շաւրջ»⁹։

Այս բոլորն ասում են, որ Հռոմում Սալմաստեցին հանդէս էր եկել ո՛չ որպէս անվերապահ եւ միակողմանի զիջումներով ընթացող բանագնաց։ Մեզ թուում է, սակայն, որ Պետրովիչը վերոյիշեալ փաստերից իր հանած եղրակացութիւններով համաձայն չէ մեզ հետ։ Նա հենց սկզբում ընդունել է, որ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու ծրագիրն է, որ Սալմաստեցուն տարել էր քէպի Երուապայց իրերի ընթացքի գնահատման մէջ մոռանում է այդ հիմնականը եւ իր ամբողջ փաստարկումներն ուղղում է այն նպատակին, որ ապացուցի, թէ նա, Սալմաստեցին, անկեղծօրէն եւ անվերապահօրէն անձնատուր էր եղել Հռոմի աթոռափին եւ ցման անձնուիրաբար ծառայել նրա պահանջներին ու շահերին։ Պետրովիչն իր ընդհանուր եղրակացութիւնների մէջ ասում է, որ Սալմաստեցին հետաեւելով իր փառապանձ նախորդների հետքերուն մեծ քարեպաշտութեան եւ կաթողիկէ սղիի նշաններ ու վաւերագիրներ տաւաւ մինչ հոս կը գտնուէր՝, ինչպէս կ'ըսէր Յուլիսս Գ պատը¹⁰։ Ըստ մեզ՝ ամէն հասկացողութիւն յարաբերական է, ևկաթողիկէ (ընդհանրական) ողիի նշաններ ու վաւերագիրներ (ապացոյցներ)։ տալը Հայաստանեաց Եկեղեցու պետի ցուցարերած քրիստոնէական սիրոյ եւ համերաշխութեան ոգին էր, քրիստոնէական ըմբռնումների ընդհանրութեան ոգու անկեղծ արտայայտութիւնն էր։ Իսկ սրբնից դուրս արդեօք գեռ ի՞նչ կարող էր հասկանալ Պետրովիչը. անպայման ու միայն հնագանդութիւն եւ հպատակութիւն, Բայց Պետրովիչը գեր աւելացնում է հետեւեալը. «Ստեփանոս Ե. եռանգուն կաթողիկէ մը ըլլալու փաստը տուաւ Հռոմի շրջանակէն դուրսն ալ, այն է Լեհաստանի հայոց առջեւ»¹¹. իսկ այս խօսքն էլ ակնարկութիւն է Լուսվում ուկրաինացի յաւնադաւան երկու երեխաների հետ կապուած մի պատմութեան, բայց այդ էլ, դարձեալ, ուրիշ հարց է. ոչ թէ հասկացողութիւնների յարաբերականութեան հարց, այլ սոսկ թիւրիմացութիւն, եթէ չենք ուզում ասել՝ պատմական փաստերի կամաւոր աղաւաղում։

6 S.-E. Assemanus, p. 60.

7 Ibidem.

8 Հ. Մ. Զամշեան, «Պատմութիւն Հայոց», Հայ., 9, Վենետիկ, 1786, էջ 518.

9 ՊՍ էջ 16 եւ 28.

10 Անդ, էջ 108:

11 Անդ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՅԻՆ ԵՒ ՅՈՒՆԱԳԱԼԻԱՆՆԵՐԻ ՄԿՐՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Պետրովիչը, Սալմաստեյու եռանգուն հռոմէական լինելուն որպէս ապացոյց, առաջ է բերում մի տեղեկութիւն, որի համաձայն նա, Սալմաստեցին, 1551 թուականին ուկրաինացի յունադաւաւաններից խլել էր երկու տղայ՝ որպէս թէ ևկաթողիկէ դաւանանքի գործնելու նպատակով¹²: Այս տեղեկութեան համար Պետրովիչը որպէս ազգիւր է ցոյց տալիս ևլուովի դատական վճիռների ժողովածուշի ժամարը¹³ եւ նրա հեղինակութիւնն ամբապնդելու համար վկայակոչում է նաև մեր օրերի մի ուսումնասիրութիւնն¹⁴, որի ազգիւրը, սակայն, հենց նոյն ևլուովի դատական վճիռների ժողովածուշի նոյն ժամարն է, ուրեմն՝ անարժէք:

Իր տարօրինակութեամբ անխուսափելիօրէն թերահաւատաւթիւն ներշնչող այս տեղեկութիւնը մեզ մզեց լծուելու՝ ցոյց տրուող ազգիւրների սառագման աշխատանքին, որից եւ պարզուից, որ ևլուովի դատական վճիռների ժողովածուշի ժամարը ժամարը վճիռների բնադրեր չեն հրատարակուել, այլ միայն վաւերագրերի ցուցակները լիներէն լեզուով՝ նրանց բովանդակութիւնը յայտնող համառօտ տեղեկութիւններով: Հատորի 60-րդ էջի վրայ գտնուում է ցուցակի № 906 նկարագրութիւնը, որը վերաբերում է երկու տղաների խնդիրը շօշափող վաւերագրին: Ահա այդ նկարագրութեան հայերէն թարգմանութիւնը:

«906. Կրակովում, 19 մայիսի 1551 թ., լեհաց թագաւոր Սիգիսմոնդ Աւգոստուսը՝ Լուովի հայոց պատրիարք Ստեփանոսին, որպէսզի նա իրենց մօ՛րը վերագրենի յունադաւաւան այն երկու տղաներին, որ նա խլել էր կաթոլիկ դաւանանքին դարձնելու համար»:

Այս ծանօթագրութեան վերջում նշուամ է, որ նկարագրուող անտիպ վաւերագրերը, որը լատիներէն է, գտնուում է Լուովի Բեռնարդինեան կոչուած դիւանատան (Archivum Bernardinum) Լուովեան ամբոցի դիւանում (Archivum Castri Leopoliensis), հատոր 328, էջ 666-667:

Ուրեմն՝ այս վաւերագրիրը Սիգիսմոնդ Բ Աւգոստոսի մի նամակն է, գրուած 1551 թուականի մայիսի 19-ին, նամակ, որով նա Սալմաստեցուն յանձնարարում է յունադաւաւան համայնքին վերագրածնել յիշեալ տղաներին: Բայց Պետրովիչն, իրեն յատուկ նկատառութով, հայ ընթերցողին ցոյց չի տալիս բուն՝ արքայական վաւերագրիրը¹⁵ եւ միայն հետագայում է, որ լատին ընթերցողի համար ամբողջութեամբ հրատարակում է նրա լատիներէն բնագիրը¹⁶: Իսկ այդտեղից ի՞նչ է պարզուում մեզ համար:

Նամակն ասում է, որ յունադաւաւանների՝ Հալիչի, Լուովի եւ կամենիցի առաջնորդ Արքէն Բալտանի եւ Լուովի արքելեան ծէսով հայերի պատրիարք Ստեփանոսի (Stepan patriarcha ritus orientalis Armenorum civitatis Leopoliensis) միջև վէճ էր առաջացել այսուտեսկան մկրտութիւնից հայկականի գարձուած ինչ-որ տղաների խնդրով¹⁷ (occasione quorundam puerorum in baptismum Armeniorum ex graeco translatorum), այսինքն՝ իրեն հայ վերամկրտուած տղաների խնդրով, խնդիր, որն ընլատուարի իրաւաբութեամնը, եւ վերջինս Ստեփանոսին գրում էր, թէ կել էր թագաւորի իրաւաբութեամնը, եւ վերջինս Ստեփանոսին գրում էր, թէ այդ տղաներն իրենց հարազատ մօրից խլուելով մմկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են գարձուել [իւ] օծուել են ձեր ծէսով» (in fidem ritus vestri armenici transtulissent baptismo [ac] juxta ritum vestrum unxissent)¹⁷.

12 Անդ, էջ 44 եւ 108; PChA p. 97 և 101:

13 "Akta Grodzkie i Ziemskie", t. X, Lwów, 1884, str. 60, № 906.

14 K. Chodnicki, «Koszciół prawosławny a Rzeczpospolita Polska; Zarys historyczny 1370-1632», Warszawa, 1934, str. 93.

15 Հմմա. ՊՍՍ էջ 44:

16 PChA p. 97-98.

17 Բնագրի այս մասն ամբողջութեամբ բերենք, որպէս զի աւելի պարզ լինի ընթերցողի համար: "Exponi fecit nobis venerabilis Arsenius Balaban Halicensis, Leopoliensis, Camenecensisque vla-

Տեսնում ենք, որ այստեղ «կաթոլիկ դաւանանքին գարձնելու» խնդիր չկայ, այլ պարզապես՝ «հայագաւառն գարձնելու». եւ, իրօք, ուրիշ ի՞նչ կարող է նշանակել «հայկական ծէսի գաւանանք» արտայայտութիւնը, եթէ ոչ հոյագաւնութիւնն իսկ «կաթոլիկ դաւանանքին գարձնել» խօսքը գանուում է այն № 906 լեհերէն նկարագրութեան մէջ, որ ժաղավածուի կազմող-խմբագրողը նուրիել է արքայական այդ լատիներէն վաւերագրին Եշանակում է՝ ժաղավածուն կազմողի շարադրած տեղիկութիւնը, որ Պետրովիչը մնաց ներկայացրել էր որպէս պատմական ազգիւր, չի համապատասխանում Սիգիսմանդ Աւգոստոսի նամակի բավանդակութեանը: Աւստի եւ այս անդ, իրաւամբ, կարելի է ընդհանրապէս հարց դնել, թէ, ձչգրաւութեան առումնով, արդեօք որքանո՞վ են վստահելի այս ժաղավածուի լեհերէն գրուած ծանօթագրութիւնները: Իսկ այդ մասին Պետրովիչն ինքն արդէն յայտնել էր իր կարծիքը, երբ մեր նայն Սալմաստեցուն վերաբերազ մի ուրիշ՝ 19 գնկա: 1550 թուակիր թագաւորական վաւերագրի մասին էր խօսում, ասելով, թէ այսահեղ «դատասկան վճիռներու խմբագած չէ վերայիշեալ արքայական առանձնաշնորհումին բռն իմաստը»¹⁸ Կոմ, ինչպէս իր իտալերէն հրատարակութեան մէջ էր կրկնում Պետրովիչը, «կազմողը չի հասկացել խնդրոյ առարկայ արքայական արտօնագրի իմաստը»¹⁹, եւ իր թէ՝ հայերէն, թէ՝ իտալերէն հրատարակութիւններում ամբողջութեամբ բերում էր իսկական վաւերագրիրը՝ իր այս կարծիքը հաստատելու համար: Իսկ ներկայ զէպքում Պետրովիչն ինչո՞ւ է փութեկոտութեամբ առաջ քաշում կազմողի «կաթոլիկ դաւանանքին գարձնելու նպատակով» խօսքը, երբ գիտի, որ դա՛ էլ սխուլ է, և զլանում է հայ ընթերցողին ներկայացնել բռն վաւերագրիրը, որի պատճէնն իր ձեռքի առկ է եւ որը տեսանելի կը գարձնէր այդ սխուլը:

Առաջ գնանք մի քայլ եւս:

Պետրովիչը տիրապետում է լատիներէն լեզուին, բայց տուեալ գէպքում ժաղվածուի կազմողին չի առարկել, թէ լատիներէն ritus բառը նշանակում է ոչ թէ դաւանանիք, այլ ծես: Ընդհակառակն՝ լուելեայն հաւանութիւն է տուել, որովհետեւ դա յարմար է «կաթոլիկ դաւանանքին գարձնելու» համար: Սակայն անսում ենք, որ Պետրովիչը, բռն վաւերագրիրը քննելիս, ուղեցել է ritus բառը հասկանալ նրա իսկական՝ ծես իմաստով եւ Armeni ritus orientalis (արեւելեան ծեսով հայեր) անսուն տակ հասկանալ լատինագաւան հայեր, որոնք արեւելեան (հայկական, ազգային) ծեսով եին վարուում, որպէս թէ ի տարրերութիւն այն լատինագաւան հայերի, որոնք թողել էին ազգայինը եւ վարուում եին արեւելեան (լատինական) ծեսով: Իսկ այս ձեւով՝ լուսվի հայերը երկու գէպքում էլ դուրս կը գային որպէս լատինագաւան: Ինչպէս երեւաւմ է, այսպիսի ելակէտով է, որ Պետրովիչն ուղում է արգարացի ցայց տալ ժողովածուի կազմողին, որպէսովի լուսվի արեւելեան ծեսով հայերի (իմա՞ լատինագաւանների) պատրիարք Սալմաստեցին կարողանայ հանգէս գալ յունագաւան երեխաններին իրը թէ լատինագաւան գարձնող:

Աւելորդ է ասել, որ այսպիսի մօտեցումը քննագուտութեան չէր դիմոնայ, քանի որ, ինչպէս ի պատմութենէ գիտենք, լուսվի արեւելեան ծեսով հայերը լատի-

dica quod te:pore nuper transacto Dominatio Tua, seu officialis Illius in spiritualibus, in civitate Leopoliensi, certos quosdam pueros duos sexus masculini fidei graecae, in minorenitate existentes, ab illorum legitima matre violenter rapisset ac in fidem ritus vestri armenici transtulissent baptismō [ac] iuxta ritum vestrum unxiissent' (Պետրովոյ Արտէն Բալաբանը, որը Հալիչի, լուսվի եւ կամենիցի առաջնորդն է, մեզ տեղեկագրեց, որ վերջերս Քո Տէրութիւնը, եւ կամ՝ լուսվի քաղաքում հոգեւոր գործերի գծով նրա պատօնատարը, իրենց հարազատ մօրից բռնի խլել է արական սեռի երկու թեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են պատկանում, եւ նրանք մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են գարձուել [եւ] օծուել են ձեր ձեռով):

18. ՊԱ. էջ 32:

19. PChA p. 96. Իսկ ձեռագրի լուսապատճէնը՝ 181:

նագաւոն չէին, այլ հայտագաւուն, այդպէս էր գրաւթիւնը մինչեւ 1630-ական թուականները, երբ սկիզբ տռան հայերի բանի կաթոլիկացման ձևանարկավիճերը իսկ մինչեւ այդ՝ եթէ լինահայ գաղաւթում պատահում էին լատինագաւունութեան յարած անհատներ, նրանց ո՞չ հայ անունն էին տալիս, ո՞չ էլ անուանում էին ուշեւելիսն ծեսով եւ կոմ արեւմբեան ծեսով; Հենց Պետրովիչի կողմից վկայուեսուած լատինական այնպիսի աղքարներում, որոնք խօսում են Լուսովի հայերի գործերի մասին, գիտեած մի դարի երկրորդ կէսում հայ ամելավ հասկանում էին միայն հայտաւուններին, այդ աղքարների ընձեռուած փաստների հիման վրայ Պետրովիչն ինքը, մի այլ ասիթով, գտնում էր, որ «կարուիլիկայ տերժինը դարձել էր լուսին-ի հոմանիշ». իսկ հայ տերժինը՝ իմաստով նայն էր դարձել ներձուածող տերժինի հաւա», եւ մարդիկ այդ անում էին, ինչպէս եղբակացնում է նոյն Պետրովիչը. «յաճախ շփոթելով առարեր ծէսերը տարբեր գաւունանքների հետ»²⁰,

Բայց թագնենք Պետրովիչի մօտեցման հղանակների հարցը: Մասնագէանիրն յայտնի է, որ լատինական աղքիւրներն Armeni ritus orientalis (արեւելեան ծեսով հայեր) կամ պարզապէս Armeni orientales (արեւելեան հայեր) անուանումով միշտ հառկանում են հայոցաւան հայերին, որոնց ի առքիւրութիւն, լատինադաւաններին անուանում են Արմeni uniti (միացեալ հայեր). Եւ այդպէս էլ ընդհանրացած է եւրոպական պատմագիտութեան մէջ, ինչպէս առենում ենք, օրինակ, հետեւեալ աշխատաւթեան վերաբերում: D. Dan, «Die orientalischen Armenier in der Bukowina», Czernowitz, 1890²¹: Այս գիրքը նուիրուած է Բուկավինայի հայոցաւան հայերի ուսումնասիրմանը:

Գուցէ անհրաժեշտ է նաև յիշել, որ այսպիսի խնդիրներում Հռոմէական եղինքու տեսանկիւնից կայ նաև կանոնականութեան հարց: «Կաթողիկէայ հանրագիտարան»-ում, օրինակ, մկրտութեան հարցերին նուիրուած յօդուածը բացայատօրէն ասում է, որ արեւելինան եկեղեցիների մատակարարած մկրտութիւններն անպայման վաւերական են եւ կրկնելի չեն²²: Եսյն հանրագիտարանի մի ուրիշ յօդուածում, ուր քրիստոնէական Արեւելքը հասկացութիւնն է պարզաբանուած, ասուում է, որ արեւելինան եկեղեցիներից էին Բիւզանդականը եւ Նրանից ծագոծ եկեղեցիները, իթիւս որոնց՝ սլաւանականը (ուստաներ, ուկրաինացիներ եւայլն)²³, որոնց բալորին յունադաւան էին անուանում:

Արդ՝ որքոնսպվ կարելի է հաւատուի համարել, թէ Հեռանդուն կոթողիկէ ։
Ստեփանոս Սալմաստեցին, Հառմէական Եկեղեցուն ծառայութիւն մատուցելու համար,
ուսնակոխ անէր նրա ունեցած կանոնական կարգերը, այն էլ հենց նոյն եկեղեցու
բացարձակ իշխանութեան սահմաններում զանուզ կեհաստանում։ Եթէ որեւէ մէկը
ուզենար կաթոլիկ գարձնել ոյդ տղաներին՝ մկրտութեան հարց արդէն չկար յունա-
դաւանների համար։ Մեզ թուում է, որ բաւական է այսքանը։

Սյապիսով՝ անտարեկուսենի է, որ Սալմասեցին, լինելով հայոց կաթողրդու, փորձ էր կատարել յունադաւան ռեկրախնացի երեխաներին հայագաւան հայ դարձնելու եւ ոչ թէ, որպէս լատինական եկեղեցու գործիչ, նրանց կարոլիկ գործնելու լունչպէս ներկայացնում է Պետրովիչը՝ օգտուելով Առողի դատական վճիռների ժամանակակիցի տղիքաբար կատարած սխալից:

20 PChA p. 16.

21 Այս դիմումը թարգմանուած է հայերէն։ Ինչու ուրիշ օպա

⁴ *Journal of Soviet History*, 2, 1950, p. 1045.

22 "Encyclopedie Cattolica", vol. II, Città del Vaticano.

²² *Ibidem*, vol. IX, 1952, p. 309-310.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր «Դիտողութիւններ» յօդուածի կարեւոր կէտերից մէկն էր Ստեփանոս Սալմաստեցու մահուան թուականի հարցը:

Սալմաստեցու մահուան թուականը որոնելու հարցում, ինչպէս տեսել էինք, կարեւոր նշանակութիւն ունէին Առաքել Դաւրիժեցու հաղորդած տուեալները, որոնց համաձայն Սալմաստեցին գեռ կենդանի էր 1557 թուականին: Դաւրիժեցու տուեալների արժանահաւատութիւնը Սալմաստեցու շրջանի կաթողիկոսների ժամանակադրուկան հարցերում՝ վեր է ամէն կասկածից, որովհետեւ դրանք հիմնուած են ձեռագրերի յիշատակարանների վրայ: Նա իր «Պատմութեան» մէջ յիշատակուած այս կամ այն դէպքի թուականները նշելիս՝ կարող է, իր ձեռագի տակ եղած ազրիւների վրայ յենուելով, սխալուել բայց այստեղ՝ խնդիրն այլ է: Զեռագրերի յիշատակարանների վրայ յենուելիս՝ նա չէր կարող սխալուել, որովհետեւ յիշատակարաններում գտած տուեալներով նա ոչ թէ կաթողիկոսների իշխանութեան սկիզբն ու վերջն է նշում, այլ միայն յիշատակման թուականները:

Արեաինոսը, որը շատ մօտիկ յարաբերութիւնների մէջ էր եղել Հռոմում Սալմաստեցու հետ, գրում է, որ նա 1550 թուականին մեկնելով այնտեղից, և գնաց կարուլու և կայսեր մօտ՝ Լեհաստանի եւ Մոսկովյայի վրայով հայրենիք վերադառնալու համար²⁴: Բայց Արեաինոսը տեղեկութիւն չունի, թէ ինչպիսի՛ ընթացք ունեցաւ այդ ուղեւորութիւնը: Արեաինոսի վկայութեանը հետեւելով՝ Հ. Մ. Զամչեանը կըրկնում է, որ 1550 թուականին Սալմաստեցին Հռոմից անցաւ Գերմանիա՝ կարուս և կայսրին այցելելու, եւ նրա ուղեւորութիւնը հասցնում է մինչեւ հայրենիք. և եւ ապա անցեալ ընդ Լեհաստան եւ ընդ Մոսկովյատան՝ եկն ենաւ ի յաջորդ ամի յաշխարհն Հայոց», այսինքն 1551 թուականին²⁵:

Բատ երեւոյթին Զամչեանը 1553 թուակիր մի յիշատակարանի վրայ է յենուում իր այս լրացումը կատարելու համար, եթէ երբեք ուրիշ ազրիւր չունի: Սալմաստեցու մասին նա գրում է, թէ «իրեւ և մուտ յէջմիածին», ընկալաւ զնու փառաք Միքայէլ կաթողիկոս [Մերտոստացի], եւ ետ նմա զառաջին պատիւ նորին եւ զնախուգանութիւն. ուստի եւ ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց Ռի, այն է յամի տեսան 1553, նա ինքն Ստեփանոս յիշի իրեւ կաթողիկոս Հայոց»²⁶:

Այստեղ մեր խնդիրն այն չէ, թէ Ստեփանոս Սալմաստեցին կջմիածին վերադաբել էր կամ ոչ, այլ այն, թէ նո, ըստ մի յիշատակարանի, 1553 թուականին կենդանի էր եւ յիշատակուում էր որպէս հայոց կաթողիկոս: Իրեւ այդպիսին՝ նա յիշատակուում է նաեւ Դաւրիժեցու առաջ բերած ձեռագրական տուեալներով՝ մինչեւ 1557 թուականը, ինչպէս տեսանք արգէն: Մինք դեռ ունենք նաեւ Յովհաննիսուկ Մշեցու վկայութիւնն այն մտաին, որ Սալմաստեցին 1555 թուականին կենդանի էր եւ լուսվում առաջնորդ էր կարգել Գրիգոր Վարագեցուն: Այս բոլորը ժխտուած են համարուում Պետրովիչի կողմից, թէեւ ժխտման փաստարկումները մեզ չեն համազում: Այնու ամենայնիւ, եթէ նոյնիսկ մի կողմ գնենք այս բոլորը՝ որպէս արտակարգներ, կամ կողմակի տուեալներ, որոնք, ըստ Պետրովիչի, կարող են արժէք չներըլու ապացոյցն են տալիս 1550-ական թուականների ամբողջ ընթացքում եւ նոյնիսկ 60-ական թուականներին:

Հ. Մ. Բժշկեանը, որ 1830 թուականին հրատարակել է Լեհաստանի հայկական

24 Տ. - Է. Assemanus, p. 60.

25 Հ. Մ. Զամչեան, էջ 518:

26 Անդ, էջ 518 - 519:

գաղութներում կատարած իր որպանումների արդիւնքները, այսպէս կոչուած ռևուլվ-
գաղութներում կատարած իր որպանում է մի հատուած, ուր, Սալմասանցու մասին խօսուե-
եան յիշատակարան»-ից բերում է մի հատուած, ուր, Սալմասանցու մասին խօսուե-
եան յիշատակարան»-ից բերում է նրա կտակը՝ հետեւեալ տեղեկութեամբ. «Դոյ նաեւ իւր կտակ,
լով, յիշատակարան»-ից բերում է նրա կտակը՝ հետեւեալ տեղեկութեամբ. «Դոյ նաեւ իւր կտակ,
յով յութեամբ յիշէ թէ սրբազն հայրապետն Հռովմայ առաքեալ է զինքն առ Ֆէրտինան-
յութեամբ յիշէ թէ սրբազն հայրապետն Հռովմայ առաքեալ է զինքն առ Ֆէրտինան-
յութեամբ կայսր Գերմանացւոց, առ որում եկաց ամիսս չորս²⁷, Բժշկեանից գեռ 60 տարի
առաջ, Յովսէփ Եպիփան Մինասովիչը իր ռՅիշատակարանք հայոց ազգի, Թագաւու-
րութեան եւ Թագաւուրների մասին անտիպ աշխատութեան մէջ նոյն տեղեկութիւնն
էր տալիս՝ քաղելով մի տելի հին ազրիւրից՝ Յիսուսեան ընկերութեանը պատկանող
մի լատին անանաւն հեղինակի գրածից, թէ «կարելի է տեսնել նուեւ [Ստեփանոսի
մի լատին անանաւն հեղինակի գրածից, թէ «կարելի է տեսնել նուեւ [Ստեփանոսի
կտակը՝ նրա [սեփական] կնիքով, որում պատմում է, թէ ինչպէ՞ս է սրբազն քա-
հանայապետի կողմից ուղարկուել Ֆերգինանդ կայսեր մօտ եւ չորս ամիս մնացել
այստեղ, եւ յետոյ Լէոպոլիս վերաբորձել²⁸: Պետրովիչն այս երկու ազրիւրներն էլ
յիշատակում է²⁹ տօնելով, որ նրանց մէջ ըինչ ինչ մանրամասնութիւններ թէեւ ան-
ճիշտ կը թուին, բայց չեն հակասեր պատմական ճշմարտութեան, այլ կը կարօսին
բացարութեանց. եւ տալիս է իր բացարութիւնը: «Արդորեւ, — գրում է նա, —
կարուոս Ե կայսրը (1500—1558), որդին Փիլիպպոս Գեղցիկի, Աւոսրիս արքիպատք-
ոին, եւ Յովհաննոն Լավիացցայի, ժառանգուած էր, ի միջի այլոց, նուեւ Հապոպուրկ-
ներու կալւածներու իրաւունքը: Սակայն 1521-ին ան թողուց Աւոսրիացւոց կու-
ռածներու ժառանգութիւնը ի նպաստ կրտսեր եղբօրը, Ֆէրտինանտի (1503—1564),
որ անսնց թագաւոր եղաւ եւ 1558-ին ալ կայսր: Ասկից առաջ եկած հն յիշեալ վկա-
յութիւններու մէջ այդ անճշտութիւնները: Եւ այդ անճշտութիւնների վերաբերեալ
որպէս բացարութիւն՝ Պետրովիչը ենթադրում է, որ Սալմասանցին հայկական հար-
ցով կարուոս Ե-ին գիմելիս, պէտք է դիմած լինի նուեւ Ֆիերդինանդ թագաւորին³⁰:

Նախ տօնենք, որ Բժշկեանի եւ Մինասովիչի գրածները ոչ թէ վկայութիւններ
են, ինչպէս համարում է Պետրովիչը, այլ ազրիւրներ, որոնք մեզ հազորդում են
Սալմասանցու ձեռքով գրուած կտակի պարսւնակութիւնը. ուրեմն՝ վկայութիւնը
Սալմասանցու գրչից է՝ Երկրորդ՝ Նկոտենք, որ այստեղ անտեղի է խօսել անճշտու-
թիւնների մասին: Սակայնոս Սալմասանցու կտակը, ըստ երկու ազրիւրների, պար-
զապէս տօնւմ է, որ պայը նրան ուղարկել է Ֆիերդինանդ կայսեր մօտ, առանց տսելու,
թէ ո՛ր պատճ էր ուղարկողը եւ ո՛ր թօւականին: Այսքան փոքր եւ այսքան պարզ
տեղեկութեան մէջ առելորդ կը լինէր որոնել պատմական անճշտութիւններ: Բայց
Պետրովիչը իր հաշիւներով ինքն է սահեցում անճշտութիւնները: Ելուկէտ ընդունե-
լով Արեւինոսի այն վկայութիւնը, թէ Սալմասանցին 1550 թուականին Յուլիսս Գ-ի
յանձնարարագրով Հասմից մեկնել էր՝ Գերմանիայի կայսր Կարուոս Ե-ի մօտ գնալու
համար³¹, Պետրովիչը բնականօրէն հետեւեցնում է, որ նա, Սալմասանցին, այդ
թօւականին Գերմանիայի կայսերական գահի վրայ պիտի գտած լինէր Կարուոս Ե-ին
(1519—1558 թթ.)³² եւ ոչ թէ նրա կրտսեր եղբայր Ֆերգինանդ Ա-ին, որն այդ ժա-
մանակ ոչ թէ Գերմանիայի կայսր էր, այլ Յոհաննիֆայի թագաւոր (1527—1558 թթ.), եւ
հետագայում է միայն, որ Կարուոս Ե-ին յաջորդեց որպէս կայսր (1558—1564 թթ.)³³,
Պետրովիչի հենց յիշեալ ելակէտն է, որ նրան մզել է կտակի տեղեկութեան մէջ

27 Հ. Մ. Բժշկեան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 107.

28 J. E. Minasowicz, «Memorabilia de gente, regno, regibusque Armeniis», Bibliotheca Apostolica Vaticana, Cod. Vat. Lat. № 12561, p. 122.

29 ՊՍԸ էջ 45—47: PChA p. 98—99.

30 ՊՍԸ էջ 47: PChA p. 99.

31 Նրա ելակէտն իրոք այդ է: «Ստեփանոս Սալմասանցի 1550-ի ազրիւր վերջերը . . .
ուղղուցաւ դէպի վիեննա . . . : Միայն գիտենք աւանդութենէ՝ թէ Հայոց կաթողիկոսը
վիեննայի արքունիքին մօտ չորս ամիս մնացած է»: տես ՊՍԸ էջ 31: PChA p. 95—96.

32 Տես «The Encyclopædia Britannica», 14th ed., vol. V, New York, 1929, p. 260—261.

33 Ibidem, vol. IX, New York, 1929, p. 165—166.

տեսնելու հարկասութիւն եւ այն վերացնելու համար ևնթագրութիւն անհլու, թէ Սալմասահցին 1550 թուականին պիտի միաժամանակ այցելած լինի կարուլս Ելայսրին եւ Ֆերդինանդ թուգաւորին:

Բայց Պետրովիչը չի նկատում, որ իր ստեղծած հակասութիւնն ամենելին էլ չի լուծուում իր տուած մեկնաբանութիւններսվ, որովհետեւ կտակը Ֆերդինանդին տալիս է ոչ թէ բազաւու, այլ կայսր տիտղոսը: Եթէ Սալմասահցին 1550 թուականին գնացած լինէր միաժամանակ թէ Գերմանիայի կայսեր մօտ եւ թէ Բանհմիայի թագաւորի, կտակում ինչո՞ւ լուռթեան պիտի մատնէր կարուլս և կայսեր անունը եւ յիշատակէր միայն նրան հնթակայ Ֆերդինանդ թագաւորի անունը, այն էլ նրան, Ֆերդինանդին, չպատկանող կայսր տիտղոսով: Այս փաստերն առում են, որ Սալմասահցու կտակի ներքին արժէքի գնահատման մէջ նախ Պետրովիչի ելակեան է սխալ եւ ազա՞ այդ ելակէտի հետեւանքով առաջացած հակասութիւնը վերացնելու համար նրա տուած բացատրութիւնը, որը չի պարզաբանում եւ ոչ մի բան:

Ուրեմն, ըստ Սալմասահցու կտակի, նա պատի կողմից ուղարկուել եր Ֆերդինանդ Ա կայսեր մօս՝ անշուշտ 1558 թուականին կամ յաջորդ տարիներին, երբ կայսերական գահի վրայ էր Ֆերդինանդ Ա-ը: Այս հետեւութիւնն ամենելին չի հակառակում Արեանոսի այն վկայութեանը, թէ Սալմասահցին 1550 թուականին Յուլիոս Գ-ից յանձնաբարագիր էր ստացել կարուլս Ե-ին ներկայանալու համար³⁴, որովհետեւ տարբեր գէպք է Արեանոսի յիշատակածը եւ տարբեր գէպք՝ կտակում յիշատակուողը, վերջինո՞ ըստ Մինասովիչի եւ Բժշկեանի աղքիւրների, Արեանոսի յիշատակած թուականին, 1550-ին, Սալմասահցու գնացած լինելը կարուլուի մօտ՝ մենք տարակուական ենք համարում այն պատճառով, որ այդ շրջանում կայսրութեան քաղաքական գրութիւնն ալեկոծ վիճակում էր՝ բուն Գերմանիայում Լութերական շարժման գէմ մզուող պատերազմներով, որոնք լուրջ մտահոգութեան մէջ պահեցին կարուլս Ե-ին՝ մինչեւ Առաջօրուրդի հաշտութիւնը 1555 թ., իսկ Սպանիայում՝ տեղական ազնուականութեան հետ կարուլս Ե-ի ունեցած մհծ գժուարութիւններով: Այդպիսի պայմաններում, ինչպէս երեւում է, 1550 թուականին ծրագրութան այդ ուղեւորութիւնն առկախ էր մնացած նզել մինչեւ Ֆերդինանդ Ա կայսեր (1558-1564 թթ.) օրերը: Իսկ թէ այս վերջին ժամանակաշրջանում կոնկրետ ո՞ր թուականին է այցելել Սալմասահցին Ֆերդինանդ Ա-ին՝ յայտնի չէ: Սակայն այս ուղրաներում պարզ եւ անտարակուութիւն է միայն մի բան՝ այն, թէ Սալմասահցին գեռ կենդանի էր առնուազն՝ 1558 թուականին, որ է Ֆերդինանդ Ա կայսեր ընտրութեան տարին:

Ստեփանոս Սալմասահցին, ըստ իր կտակի, չորս ամիս մնացել է Ֆերդինանդ Ա-ի տրքունիքում: Այս ժամանակամիջացի նկատելի երկարութիւնը ցոյց է տալիս, որ նա բանակցութիւնների մէջ էր կայսեր հետ. բայց թէ ինչ ընթացք են ունեցել այդ բանակցութիւնները եւ ինչո՞վ են աւարտուել՝ յայտնի չէ: Հ. Ն. Ակինինանը, որը վիեննոյի պետական դիւնանում նիւթեր չէր գտել 1550 թուականին կարուլս Ե-ի հետ Սալմասահցու անսակցութիւն ունեցած լինելու վերաբերեալ («Վիեննայի պետական գիւտանը որ եւ իցէ յիշատակարան չէ պահպանած այս մտսին, որչափ քննութիւնքս համոզեցին զիս»)³⁵, հաւանաբար որեւէ արդիւնքի կը հասնէր, եթէ իր ուրանումները յատկացրութ լինէր Ֆերդինանդ Ա-ի իշխանութեան շրջանին:

Այնուհետեւ 1560-ական թուականներին գարձեալ յիշատակութիւն կայ Ստեփանոս Սալմասահցու մասին եւ այս անգամ տեղեկութիւնը վերաբերում է նրա մահուանը: Տեղեկութեան աղքիւրը Յիուլիոս հեղինակ Բ. Հերբեստն է, որը ժամանակակից է գէպքին: Հերբեստը, Լուովի հայերի հետ իր ունեցած շփումները նկարագրելիս, 1566 թուականին գրում է, որ այնտեղ Սիմոն երէցը նրան ասել էր, թէ

34 ՊՍԾ էջ 20-21 և 26-27: PChA p. 93 և 180.

35 Հ. Ն. Ակինինան, «Ակատառութեան շարժումը Ժ-ժ գարերուն Հայոց մէջ», Հանդէս Ամսութան, 1917/18, էջ 147:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԴ. ԽԱՐԲԵՐԴՑԻ
(1580 ? - 1641 ?)

Մասնաւ է Խարբերդի եղեղի գիւղը ԺԶ. Դարու վերջին քառորդին մօտաւորապէս: Դրգին էր կիրակոս քահանայի և Հայփամիմէի: Աշակերտած է Շէնքուչցի Մարտիրոս Վարդոպահտի, որմէ զաւազոնի իշխանութիւն ստացում է 1618ին:

Կը թուի թէ իր սիրակոն սաստարէզը եղած է քարոզչութիւնը, յատկապէս նիւթուննալով եսայի Մարգարէի գիրքը, որուն վրայ զաստիսած և քարոզած է երկար տարիներ, ինչպէս կը տեղեկացնէ Մասպատկի մասին զրուծ ոտանուորին տառջին տաւներով:

Ան կ. Պոլիս գացած է 1628ին, ըստ վկայութեան Յակոբ գրչի. «Ի թվականութեան հայկագետն տուժարիս Ռէջ . . . ոմն յերկրէն Հարբերդու, անուանեալ Արիստազէս վարդոպահտ, աւաեալ և հմուտ եղեալ Հին և Նոր կատարանաց, իջեալ ի կոստանդնուպոլիս, վասն բանի Սր. Ա-

ւետարանին, զի քարոզեցէ յաւնկն հաւատացելոց»: - Յիշտակարանք ԺԵ. Դարի, Բ. Հատոր, էջ 288, թիւ 437:

Կ. Պոլսոյ մէջ իր կատարած գործերէն գովեստով յիշուած է Պալտիու Ս. Հրեշտակապետ Եկեղեցիին նորագման առթիւ իր բերած բարոյակոն մեծ օժանդակութիւնը: Ահաւասիկ հակիրճ վկայութիւն մը: Արիստակէս վրդ. Խարբերդցի «քազում աշխատանու կրեաց թուին Հայոց Ռէջին, վերսախն նորագելով և զարդարելով զՊալտիու դրան Սր. Հրեշտակապետ Եկեղեցին, դոս և քարոզ տաելով, և զժողագուրդոն յորդորմամբ ժաղովք անելով, հազիւ տղատեաց զեկեղեցին ի պարտաւցն»: - Ցաւցու Ձեռ. Ս. Յակոբիանց, Բ. Հատոր, էջ 141: Ձեռ. Ս. Յ. Թիւ 2944, Այդ մասին ընդարձակօրէն գրած է Գրիգոր Դարանազեցին իր ժամանակագրութեան մէջ (էջ 187 - 189):

Արիստակէս վրդ. ջանք տարած է նաև գիրքներ ստանալու, ինչպէս կը տեղեկանանք իր կամ ուրիշներու կողմէ գրուած հետեւու յիշտակարաններէն:

Երբ, մի քանի տարի տառջ, Հռոմ էր գնացել իր եպիսկոպոսի հետ, որը հիմա Լուովում է թաղուած, վերջինու այնտեղ Ս. Պատարագ էր մատուցել հայկոկան ծէռով³⁶, Հերթաւոտի այս վկայութիւնը յիշտակում է նուև Պետրովիչը՝ մի ուրիշ կապակցութեամբ եւ իրաւոմք գտնում, որ ակնարկուած հայիսկոպոսը հենց Սալմատացին է³⁷, բայց հաշուի չի առնում, որ ամի քանի տարին տաելով կարելի է հասկանալ 2-3 տարի, կամ 3-4 տարի, կամ էլ շատ-շատ՝ 5-6 տարի, բայց ոչ 16 տարի, ինչպէս լոելեայն համարում է ինքը՝ Պետրովիչը, որպէսզի կարողանայ տանել-կապել 1550 թուականի հետ: Եւ սրանով մենք ժամանակակից Հերբերտի վկայութեամբ տեղեկութիւն ենք ստանում այն մասին, որ Սալմատացին մահացել է 1560-ական թուականների սկզբի տարիներին եւ թաղուալ է Լուովում: Բացի այդ՝ Հերբերտի ամի քանի տարի տառջ խօսքը միաժամանակ վկայութիւնն է այն ուղեւորութեան, որ Սալմատացին պիտի կատարած լինէր Լուովից գէպի Հռոմ, որպէսզի պապից յանձնարարագիր ստանար՝ Ֆերդինանդ կայսրին ներկայանալու հաւար:

Այժմ վերյիշենք, որ, ժամանակին, որոշ ազգիւրներում Սալմատացը մտնուան որպէս տարեթիւ ցոյց տրուած 1551 եւ 1552 թուականների մասին խօսելիս, գրել էինք. «Մի շարք փաստեր մեզ ասում են, թէ յիշեալ բոււկաններին Սալմատաց Սալմատացին չէր մահացել Լուովում եւ չէր թաղուել այնտեղ»³⁸: Այդ հին հաւատմանն են վերաբերում վերեւում մեր ներկայացրած փաստերն ու փաստարկները:

(Մնացեալի լազուրիլ)

Յ. Ս. ԱնԱԱԱԱԱ

36 B. Herbest, «Wypisanie drogi», MLUR, vol. 5, str. 4-8.

37 PChA p. 148.

38 Եջմիածին, 1956, № 11-12, էջ 76: